

**XIII ԴԱՐԻ ԶԱՅ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ
ՓՈԽՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Ա. Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ

XIII դարում հայ բժշկագիտական միտքը բուռն ծաղկում է ապրում: Մեկը Մյուսի հետևից ստեղծվում են նորանոր բժշկարաններ՝ շարունակելով հայ բժշկագիտության յավագույն ավանդները: Նշված ժամանակահատվածի բժշկագիտական գրականությունը շատ բազմազան է, որն, իհարկե, այնքան էլ բնորոշ չէր նախորդ հարյուրամյակների համար: Այս ընթացքում ստեղծվեցին մարդակազմությանը, ախտաբանությանը, մահճաբուժությանը և սրնունդաբուժությանը վերաբերող բազմաթիվ առանձին գրքեր, այլև՝ «Ավագ հեքիմարան»-ի խմբագրված տարբերակները: Հեղինակված գործերի մեջ առանձնանում են ձիագիտարանները, որոնք գրվել են ժամանակի անհետաձգելի պահանջով և բարձր գիտական արժեք ներկայացնող աշխատություններ են, եզակի և անկրկնելի հուշարձաններ:

XIII դարի հայ բժշկարանները մի քանիսն են.

1. «Գագիկ-Հեթումյան, բժշկարանի 3-րդ մաս (Վեն., Սբ. Ղալար, մատ. ձեռ. 1281, Ծրուս., Սբ. Յակոբեանց մատ. ձեռ. 370, ալյուհետև՝ համառոտ՝ ԳԶ):

2. Գրիգորիս — Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց (Մատ. ձեռ., 415, 8873):

3. Ստեփանոս — Ծաղիկ:

4. Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ:

Նշված աշխատություններից երրորդը դասվում է կորած ձեռագրերի շարքը, մնացած երեքը հասել են մեզ դրեթե անխաթար, ընդ որում 2-րդը և 4-րդը հրատարակվել են¹:

Նշենք, որ բժշկարանները բառապաշարի օգտագործման առումով զգալի տարբերություններ չեն դրսևորում: Սրանց գործածած ընդհանուր բառապաշարի մեջ, ծագումնաբանական սկզբունքը հաշվի առնելու դեպքում, առանձնանում են երկու շերտ՝ բնիկ և փոխառյալ: XIII դարի հայ բժշկարաններում մեծ թիվ են կազմում արաբական և պարսկական փոխառությունները: Վերջիններս 5—6 անգամ զիջում են արաբ. փոխառություններին (նկատի ունենք նոր պրակ. փոխառությունները): Շուրջ 700-ի հասնող փոխառություններից ավելի քան 550-ը արաբական փոխառություններ են. սրանցից միայն 11-ը ընդհանուր են երեք բժշկարանների համար՝ արաղան, դարդար/տօպտօպա, ըռուպ, կոլինջ, նասուր, նկրիս, պախուա, սանդալ, սասլալ,

¹ Տե՛ս Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց, աշխատասիրությամբ Ա. Կոռյանի, Ե., 1962 (ալյուհետև՝ Գր.): Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, աշխատասիրությամբ Բ. Զուգասզյանի, Ե., 1980 (ալյուհետև՝ ԲԶ):

սաւտայ, ֆաֆուր, իսկ պրսկ. փոխառութիւններից 4-ը՝ դահ, մարտսանգ, պրսում, սարսամ: Բացի այդ, կան փոխառութիւններ, որոնք ընդհանուր են բժշկարանների և հրկուսի համար. սա վերաբերում է և՛ արաբ., և՛ պրսկ. փոխառութիւններին: Նախ ներկայացնենք արաբ. ընդհանուր փոխառութիւնները, այսպէս. ԳԶ-ԲԶ. ալլիմիայ, զաֆրան, զննուֆր, զպիպնայեյ, թրմուզ, քմբրհնդի, քուրիայ, իսսիայ, խուրս, կուստ, հաւիճ, հիհնդիպէ, հլեյն, հմվայն, հաշիր, նուլինս(ւ, մաղտել, մարտակուշ, մթխալ, մորհամ, մուլլ, մուտ, յաջպ, նրճես, շահմիհանդալ, շառտել, շարապ, պզրդայտուն, պուխար, սալիխա, սակամունի, սամդ, սաւնուպար, տայար, տարպա, տէմէտ, տուէն, քիւրայ, քիլմելեմ, քեֆս, ԳԶ-ԳԹ. բահաղ, քղքիւր, քուլմա, ֆէլին, ֆլեղմունի, Գր.-ԲԶ. խումար, ոսպու, սինապ, ֆամնայ, ֆրսխ:

Պարսկական ընդհանուր փոխառութիւնները ներկայանում են հետևյալ ձևով. ԳԶ-ԲԶ. աեծուր, կասայ, մնջան, նանխադհ, շաֆաւրան, սլենիթ, ֆահրպա//ֆահապրա, ԳԶ-Գր. բաժա:

Քննութիւնը ցույց է տալիս, որ փոխառյալ բառերի գերակշիռ մեծամասնութիւնը հայերենին է անցել գրական լեզվի միջոցով (գիտական տերմինաբանութիւն), մյուս մասը՝ անմիջական փոխազդեցության հետևանքով (բանավոր կամ ժողովրդական բնույթի փոխառութիւններ). վերջինս ավելի շատ հատուկ է պրսկ. փոխառութիւններին: Սրանց մի մասը մինչև այսօր էլ գործածական է մղխակց. լեզվում. զարդան, գուշ, դահ/խ, դեն, զահր, քաղ/ժա, քամաշա, լական, լուլա, իաշխաշ, խիար, հաւան(զ), մաշ, շալ, պէհման (բանման), տաղ (դաղ), տապարգա, ֆանչալ (ֆաչալ), քթան (ֆաթան):

Փոխառութիւնների վերաբերյալ քիչ թե՛ շատ առարկայական պատկերացում կազմելու համար պետք է դիմել դրանց իմաստաբանական վերլուծութեանը: Հարկ է նշել, որ ինչպէս բժշկարանների ընդհանուր, այնպէս էլ փոխառյալ բառապաշարի մեջ առանձնանում են տերմինային և ոչ տերմինային արժեք ունեցող բառերը. ըստ այդմ փոխառութիւնների իմաստային խմբավորումը կատարելիս անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ մոտեցում. ոչ տերմինային բառերի նկատմամբ արժեք կիրառել իմաստային խմբերի դասակարգման ընդունված եղանակը (Բաքի դասակարգում), իսկ տերմինային բառերի նկատմամբ՝ տերմինային որոշակի դասակարգում (կզմխս. տերմիններ, ախտանուններ, դեղանյութեր, բուժական գործ): Ավելի հստակ պատկերացում ունենալու համար փորձենք ոչ տերմինային որոշ բառերի օրինակի վրա ներկայացնել ԳԶ Յ-րդ մասի արաբ. փոխառութիւնների թեմատիկ բաշխումը (ըստ Բաքի դասակարգման).

3. կենդանիներ. — շապուտ < արաբ. šabbūt «ծածան, պերկես», տոււէճ < արաբ. durāj «մի տեսակ հնդկահավ»,

4. մարմնի մասեր. — ադիմ < արաբ. ādīm «կաշի»,

5. ուտելիք և քմայելիք. — զիլիպաճ < արաբ. zīlīpāj «մի տեսակ ապուր», ըռուզ < արաբ. ruzz «բրինձ», ըռուպ < արաբ. ruhb «թանձրահյութ», մարապա < արաբ. marābba «մուրաբա», նուղլ < արաբ. nuql «աղանդեր»,

6. հագուստ. անձնական զարդարանք և խնամք. — նատիֆ < արաբ. nādīf «բամբակե մտնվածք», սուպոն < արաբ. sūbūn «օճառ»,

7. երկրագործութիւն և բուսականութիւն. — բլելիճ < արաբ. bālīlāj «բլիլաճ», զաֆրան < արաբ. za'farān «զաֆրան», խաւնուպ < արաբ. ḥā'ir-nūb «եզդերենի», պապունիճ < արաբ. bābūnaj «երիցուկ»,

8. ֆիզիկական տարբեր գործողութիւններ և սրանց հարաբերութիւնը առանձին արվեստների և արհեստների հետ՝ համապատասխան գործիքնե-

րով, նյութերով և արտադրանքներով. — սուպտուպա < արար. dabdaba «թրմ-բուկի զարկ, թմբուկ»:

Ինչպես արդեն նշվեց, փոխառությունների մի զգալի մասը կազմում են բժշկ. տերմինների արժեք ունեցող բառերը: Դրանք կարելի է խմբավորել՝ ելնելով տերմինային իմաստից.

ա) կազմախոսական տերմիններ. հէճէպ < արար. hiǰābu (hāǰiz) «ըստոժանի», նսիճ < արար. nasīǰ «հյուսվածք, մաշկ»,

բ) ախտանուններ. — արախան < արար. araqān «ղեղնախտ», խափական < արար. hafaqān «սրտի խփոց, արագ բաբախում», նկրիս < արար. niqris «ոտքերի հողացավ», սապալ < արար. sabāl «աչքի եղջերաթաղանթի բորբոքում»,

գ) դեղանյութեր և պատրաստուկներ. — աֆիոն < արար. afiyān «օպիում, խաշխաշի հյութ», թուփա < արար. tūtiyā «ցինկի բաղադրություն», թրիակ < արար. tiriyāq «հակաթույն», լղապ < արար. lu'āb «բուժական թանձրահյութ», մաճուն < արար. maǰūn «ղեղախյուս», մորհամ < արար. marham «քսուք»,

դ) բուժական գործ. — էլէճ < արար. 'ilāǰ «բուժում, ապաքինում», հաքիմ < արար. hākīm «բժիշկ», նուպա < արար. nāubā «նուպա», տէմէտ < արար. ḡimād «վիրակապ»:

Արարական և պարսկական փոխառությունների իմաստային խմբերի բաշխման ուղորտը տարբեր բժշկարաններում տարբեր է: Այն կախված է բժշկ. աշխատության նպատակադրումից, նրա լեզվատերմինային որոշակի ընդգրկումից. ավելի պարզ՝ մահճաբուժական և դեղաբանական հարցեր արժարժող բժշկարանը (ԳՂ Յ-րդ մաս) բնականաբար ավելի շատ է օգտագործում դեղաբույսերի, դեղանյութերի, բուժական պիտույքների անունները, քան, ասենք, ախտաբանական և կազմախոսական հարցեր քննող Գրիգորիսի բժշկարանը, որի մեջ անհամեմատ շատ են ախտանունները և կզմխս. տերմինները: Ինչ վերաբերում է «Բժշկարան ձիոց» աշխատությանը, այստեղ հավասարապես օգտագործվում են և դեղաբանական, և ախտաբանական-մահճաբուժական փոխառյալ տերմինները:

Փոխառյալ բառերը երբեմն հավասարաթեք գործառություն են ստանում համանիշային շարքերում, այլ անդամների կողքին: Ստորև ներկայացնենք այդպիսի մի քանի շարքեր.

խափակ—սքթէ—փաղաղ, խթինակ—խնախ—հեղձուկ, հակկա—օր—տաշար, մահմուտի—սակամունի—համբարան, մալանխօլիայ—մաղասակաթ, նասուր—գէշցաւ, պօթան—մեղրաջուր, ոասմ—օրէն, ռէճնիշ—խախաց:

Փոխառությունների իմաստաբանական քննությունը բացահայտում է նաև մի այսպիսի երևույթ. որոշ փոխառությունների՝ հայերենում ունեցած նույնական տառադարձության շնորհիվ առաջ են գալիս այսպես կոչված համանուններ, ինչպես. նատիֆ «բամբակե մանվածք» և նատիֆ «օճառախոտ», խաս «կաթնուկ, հազար» և խաս «ազնիվ, ազնվացեղ, ընտիր»:

Բժշկարանների ընդհանուր բառապաշարի վերլուծությունը ի հայտ է բերում փոխառությունների հետ ոչ ուղղակի, սակայն որոշակի առնչության մեջ գտնվող մեկ այլ իրողություն, որն է պատճենումը: Պատճենվում են տերմինային անունները, հատկապես բարդված ձևերը և բառակապակցությունները, ինչպես. գպիպէէպէլ—լեռնաշամիշ, մանիզիհիէ—ձկան մահարար, յուլտալիպ—խաշափայտ, ճանախո—հացհամեմ, պսպային—շատտովի, երբեմն էլ պարզ անունները. համամա—աղավնիճ: Սա էլ իր հերթին է նպաստում հա-

մանիշային շարքերի գոյացմանը, որի անդամներից մեկը պատճենումն է, մյուսը՝ փոխառյալ միավորը:

Ընդհանուր առմամբ, միջնադարյան բժշկարանների փոխառությունները այս կամ այն շտիպով յուսարանվել են լեզվաբանական և բժշկագիտական գրքակառույցի մեջ²: Այդուհանդերձ, անհրաժեշտություն կա անդրադառնալու այն սակավաթիվ փոխառություններին, որոնք հանդիպում են միայն 13-րդ դարի բժշկարաններում. այն էլ մեկ-երկու վկայությամբ.

Աղաւաշ < արաբ. /ahfašu «ցերեկային կուրությամբ տառապող, խարխափող» — և սրտին, որ անուանի աղաւաշ, որ է դմրած կամ գումարած (Գր., 60): Նույնից է կազմված աղաւաշալ բայաձևը և պրսկ. aḥfašbāng «մի տեսակ մոլեխինդ, թմրեցնող բանգի» > միջ. հայ. աղվէշբանգ (տարբերակները՝ աղվէշբէկ, աղվէշպանկ, աղուէշբանգ, աղուշբանկ) բուսանունը,

Ապուրմսայ < արաբ. /abūr ramsā «թարախածին (խոց)» — Ապուրմսայ, որ է ուռից, որ լինի ի յարենէ (Գր., 38): Որոշ այլ ախտանունների նման կազմված է արաբ. abū «հայր, ծնող» բաղադրիչով, ինչպես. ābū šafirā «ղեղնախտ», abūr rukab «հարբուխ, տենդ» ևն,

Բուհր < արաբ. /buhr «հեղուկ» — Եւ ասեն առաջին իմաստունքն. թէ բուհրն և յանկարծ կանգնիւն ընծայի ի սրտին բուխարէն (Գր., 108): Նշենք, որ բժկարանի գրչագիր օրինակներում (Մատ. ձեռ. № 415, № 8873) հանդես է գալիս երկու տարբերակով՝ բուհր և բուրհ, ընդ որում՝ բժշկարանի հրատարակության մեջ նախապատվությունը տրված է վերջին տարբերակին, որն էլ բժշկարանի բառարանում ենթադրաբար նույնացվում է արաբ. bal'ar «բերանի գարշահոտ» բառի հետ: Գրեթե նույնն է կրկնում ՄՂԲ-ն³ (1,131)⁴, ձևի համար բերելով buhr, որը սակայն այդպիսի իմաստով հանդես չի գալիս,

Համայթուկ < արաբ. /zamā't հիմքից «ծարավ, ցամաքում, ջրազրկում» — որ օգտէ մ̄ (=ամէնայն) ցեղ ախտից աչցվութէ, թէ ի մաղասու: Թէ զմայթուէ, թե ջրբերէ և կ (=կամ) թէ գիշերն եր արևն ընգրնի վատ տեսնին (ԳՉ, 251): ԱմԳՉՊ-ում⁴ (1,194) հայտնվել է այն կարծիքը, իբր ենթաշերտային բառերից է՝ ձմա(յ)թ ձևով: Սակայն մեզ պեկի հավանական է թվում արաբ. zamā't հիմքից կազմությունը (նման կազմությունների համար համտ. մի այլ՝ կամշ ախտանունից՝ կամշուկ < կամշ + աունել),

Ժաւնտալ < պրսկ. /zojīdan «ճոճվել, երբրալ» — Յորժամ առնուս լկամն ու արգելես, նա շրժաւնտա (ԲԶ, 74): ԲԶ-ի բառարանը համադրելով Հ. Աճառյանի կողմից բերված ճոճկտալ բառի հետ (ՀԱԲ, 3, 217), համարում է վրիպակ կամ տարնմանության արդյունք, որտեղ ճ-ն վերածվել է ժ-ի (ԲԶ, 195): Սա, իհարկե, անհավանական է, մանավանդ, եթե նկատի ունենանք կ-ի խնդիրը: Այստեղ գործ ունենք փոխառության հետ. ըստ որում՝ փոխառվել է բայական հիմքը՝ zojīd: Այս ընդունելու դեպքում ճշգրտվում է նաև Այգեկցու առակներից մեկում առկա ճտեկ բայի իմաստը, որը ժաւնրտալ-ի գրափոխված ձևն է. «Առիժն խնդրէր, թե բերէք զձագ ձեր. զի ոք որ ոչ ճժտեսցէ, զայն ինձ հարսն արասցեմ» (ՎԱԱ, 318)⁵: Այստեղ ևս գործած-

² Միջնադարյան հայ բժշկարանների փոխառություններին անդրադարձող վերջին աշխատություններից հիշատակելի են՝ Խ. Ղազարյան, Փոխառությունները միջին գրական հայերենում, ԲԶ, 1992, թ. 2, էջ 17—24, Ս. Վարդանյան, Ամիրգոյաթ Ամասիացիի և միջնադարյան հայ բժշկական տերմինաբանությունը, ՊԲԶ, 1990, թ. 4, էջ 105—119.

³ Խ. Ղազարյան, 2. Ավետիսյան. Միջին հայերենի բառարան, հ. 1—2, Ե., 1987, 1992:

⁴ Ակարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա, Բ, Ե., 1972, 1975:

⁵ Ժողովածուք առակաց Վարդանյալ, մասն Բ, Ս. Պետրբուրգ, 1894:

ված է նույն «ճոճվել, երերալ» իմաստով և ոչ թե «տգեղ, անճոռնի լինել» (տե՛ս նաև ՄՀԲ, 2, 37),

Լիմա < արաբ. /limma «խոնժ, թելերի խուրձ»։ — պատրոյգ Կ (=կամ) լիմ մորճամ կանաչ որ լինի նասուր, հոտ, թարախ և ի դուրս շգա (ԳՂ, 369)։ ՄՀԲ-ն, հենվելով Մ. Մուրադյանի կարծիքի վրա», (ԱՄԳՂՊ, 1, 194) դիտում է իբրև անասույց նշ. բառ (ՄՀԲ, 1, 306), իմաստի համար նշելով «լաթի կտոր»,

Խամ(ա) < արաբ. /ḥamma «գարշահոտ»։ — զամէն դեղտ ուտել տուր որ զնստեր ցաւէ և քամակն ի խամէ, որ է թանձրացեալ մազասն (ԳՂ, 352)։ Մ. Մուրադյանը (ԱՄԳՂՊ, 1, 194) հայտնում է այն կարծիքը, թի ենթաշերտային բառերից մեկն է, որ ճիշտ չէ։ Այլ բժշկարաններում մեզ չի հանդիպել այս բառը, և թվում է՝ ունի շատ սահմանափակ կիրառություն,

Խաս < արաբ. /ḥas «կաթնուկ, հազար»։ — զէդ պօթան արա . . . խասի ունտ, մարտակուշ (ԳՂ, 306)։ Այս բուսանունը այլ բժշկարաններում մեզ չի հանդիպել. չի արձանագրվել ՄՀԲ-ում,

Խթինակալուհամ < արաբ. /ḥtināq ar-rahm «հեղձուկ, արգանդի կծկում, «ասֆիկսիա»»։ — եք յորովայն կնոջ ցաւ ընկնի խթինակալուհամ ասի տաճկերէն (ԳՂ, 378)։ Այս ձևով այլ բժշկարաններում չի գործածվել և տեղ չի գտել միջ. հայերենի բառապաշարը արտացոլող բառարաններում, այդ թվում՝ նորբրս հրատարակված ՄՀԲ-ում։ Գտնում ենք միայն ԱՄԳՂՊ, 1, 264՝ «որովայնախեղդ» իմաստով։ Նշենք, որ սա Ասար Սեբաստացու բժշկարանում⁶ բերվում է էճթնախ տարբերակով, որ բացատրվում է այսպես. «արգանդին խծկիլն է, որ է զէտ ըխտաւոր լինի» (Աս. Սեբ., 264),

Խուշրինակ < միջ. պրսկ. /ḥōšbinak «ակնոց, խոշորացույց» — խոտ մի արքաիկաղին ծաղիկն դեղին է, տերկն որպ (=որպէս) խուշրինակ և տակն որպ սունկն (ԳՂ, 332)։ Լ. Աճառյանը, հենվելով Հրուս. § 1140-ի վրա և անծանոթ լինելով բժշկ. բնագրին, մեկնում է իբրև «մի տեսակ անծանօթ բոյս» (ՀԱԲ, 2, 421)։ Սակայն ինչպես երևում է բերված օրինակից, խոսքը ոչ թե հատուկ բուսանվան մասին է, այլ նրա արտաքին տեսքի նկարագրության՝ տերկները ակնոցին նմանեցնելու մասին,

Հէճէպ < արաբ. ḥijāb «ստոծանի»։ — մօտ ի լերդն այտոյց լինի իր անուն հէճէպ ասեն (ԳՂ, 271)։ ԱՄԳՂՊ-ում (1, 203, 266) դիտվում է իբրև «կողերի մոտ գտնվող մաշկը», որը համատեքստից ելնելով չի հաստատվում։ Թերևս, ճիշտ է վերը բերված նշանակությունը,

Մղայնեխ < արաբ. /muḥanniḡ «շնչահեղձ անող, շնչարգելող»։ — և կայ, որ գորգզայ ու զշնիթն գլխովն ի հետ ի դեհաց դեհճ ձգէ. և ասէ իր յարապն մղայնեխ (ԲԶ, 80)։ ԲԶ-ի բառարանում դիտվում է իբրև անասույց նշ. բառ (ԲԶ, 217), իսկ ՄՀԲ-ն թեև բերում է muxānneḡ ձևը, սակայն կասկածում է և տալիս է սխալ բացատրություն՝ գայլի վազք ունեցող մի տեսակ ձի (2, 140)։ Վերը բերվել է խթինակալուհամ ախտանունը և փոխատու ձև դիտվել iḥtināq-ը։ Դժվար չէ նկատել, որ մղայնեխ-ը ծագում է նույն արմատից՝ ḥānaqa «խեղդել, շնչահեղձ անել»,

Նատիֆ < արաբ. /nādīf «բամբակե մանվածք»։ — առ զճիճո բոյներն, որ զէդ բեկ եղկներ լինի և աղվն ծիրտ և այլ եփէ որ զէդ նատիֆ լինի (ԳՂ, 382)։ Հիշյալ բառը այլ բնագրերում չի հանդիպում։ ԲԶ-ում առկա նատիֆ-ը այլ նշ. ունի՝ «օճառախոտ»,

Շարասիֆ < արաբ. /šarāsif հզ. ձև /šursuf-ի «կողային կոճիկ»։ —

⁶ Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, աշխատասիրույթյամբ Գ. Մ. Կարապետյանի, Ե., 1993:

ծւ այս նեղս ... և կամ ի լայն անգամացն, որ ի ստամոքաց ներքեն կան, որ անուանին շարասիֆ (Գր. 65): Միջնագարյան բժշկ. աղբյուրներում, թերևս, միակ վկայությունը սա է:

Չախել < պրսկ. /čaxidan «ճիգ գործադրել, ջանք թափել, տքնել» բայի ներկայի հիմքից, նույն նշ-մբ. — շախէ զգուխն, զողա բազկունքն, թուլնայ ակընջվին (ԲԶ, 110): Ինչպես նշում է ԲԶ-ի բառարանը (ԲԶ, 288), čaxidan բայի փոխառյալ ձևն է, որ ունի, «կագել, վիճել, իրար հետ կովել» իմաստը. այսպիսի իմաստային գործածությունը հանդես է գալիս մասնավորապես Պոլսի բարբառում (ՀԱԲ, 3, 622): Նկատենք, այնուամենայնիվ, որ պրսկ. čaxidan բայն ունի ավելի նախնական մի իմաստ՝ «ճիգ գործադրել, ջանք թափել, տքնել», որով էլ փոխառվել է. ինչպես երևում է բերված օրինակից, այն ունի «տնջալ» իմաստը,

Պիճակ < միջ. պրսկ. *pīčak «զուլխոտ, պատատուկ». — զպիճակ բանջարն շորցո և աղա, ձիթով յար (ԳՂ, 387): Հ. Աճառյանը, քաղելով Հբուս. § 2551-ից, անստույգ է համարել իմաստի համար նշելով «անծանօթ մի բանջար» (ՀԱԲ, 4, 82): Սա, ակնհայտորեն, նոր պրսկ-ում պահպանված pīčak բուսանունն է, թեև փոխառության աղբյուրը, իհարկե, միջ. պրսկ-նն է, այլապես կունենայինք փ-ով ձև, ինչպես որ առկա է այլ բժշկարաններում, և արձանագրվել է Ալիշահի կողմից՝ փիշեք ձևով (Հբուս. § 3063),

Սղար < արաբ. /qa 'r «ամրոց, դղյակ». — և դիպին ընդ շարկամն ու փցնենն ու խոյլ հեծելին և ի սղարնի և ընդդէմ բերդի (ԲԶ, 44): ԲԶ-ի բառարանում (ԲԶ, 236) և ՄՀԲ-ում (2, 332) թեև բացատրվում է իբրև՝ բերդ-սակայն փոխառու ձևը համարվում է ինչպիսիք, այնինչ պետք է դրվեր qašr, որի դրափոխված ձևն էլ հենց առկա է բերված օրինակում,

Տարապ < արաբ. /t'arab «վարակիչ լուծ». — տարապն, որ է միշտ լուծումն ազգեազգ մաղձերոյ (Գր., 136): Այլ աղբյուրներում չի հանդիպում, իսկ ՄՀԲ-ում (2, 381) ինև արձանագրված է, սակայն ծագման մասին չի խոսվում,

Տուպիայ < արաբ. /tā'biyā «մեղրանման (արտազատում ունեցող բույս)». — Այլ դեղ էլրնեբի սը կալի տուպիայ (ԲԶ, 114): ԲԶ-ի բառարանում (ԲԶ, 242), դիտվում է անստույգ բառ, իսկ ՄՀԲ-ում (2, 396) սխալմամբ հղվում է տուպիային «մեղրային ուտուցք»: Նշված բառը արաբ.

/dā'ub «մեղր» հիմքից կառմված dā'ubiyā բառաձևն է «մեղրային, մեղրանման» իմաստով: Հիշենք, որ Գրիգորիսի բժշկարանում նույն տիպի թարախային բշտերի համար գործածված է շահտիեհ < արաբ. šahdiya «մեղրային, մեղրանման» տերմինը, այս անգամ համանիշ šāhd, «մեղր»-ից,

Փաղուտակ < միջ. պրսկ. pālūdāg, պրսկ. p'ālude «պաստեղ». — և այլ եփէ, որ զէդ նատիֆ լինի... որ գէդ փաղուտակ լինի (ԳՂ, 382): Բացի այս օրինակից այլ վկայություններ չունի. բառարաններում չի արձանագրվել: Փոխառվել է նաև արաբերենում՝ fālādāj/bālūzā տարբերակներով: Հանգում է իրան. pālūd բայահիմքին՝ «ճզմել, քամել, մզել. գտել» իմաստով,

Փուշա < պրսկ. /p'uše «քոտրք». — սպիտակ փուշա զուպէ և լեւսէ (ԳՂ, 253): Միակ վկայությունը թերևս, սա է. այլ բժշկարաններում չի հանդիպում և բառարաններում տեղ չի գտել,

Փուլու < արաբ. /fūlūl հզ. ձև fāl-ի «կտորտանք, մանրազնդիկ». — հին ճրագու մանր բլթնի արա և լիրմէտ փուլու արա (ԳՂ, 252): Հետազոտող-

7 Белкин В. М., Среднеперсидские заимствования в арабском литературном языке. — Сб. Ирано-афразийские языковые контакты, М., 1987, с. 19.

ներից Մ. Մուրադյանի կարծիքով ենթաշերտային բառերից մեկն է, որի հետ դժվար է համաձայնել (ԱՄԳՀՊ, 1, 194):

Օրվար < արար. /'urra «քոս, գողութուն»։ — օրի, որ լինի ի ա դեհն: Կարօսի տակ, կղմուխ (ԳՀ, 351): Այս մեկը ևս նախորդ մի քանի ախտանունների նման չի գործածված այլ բժշկարաններում, բացի ԳՀ, 1, 61 եղած մի վկայությունից, որտեղ այլ հիվանդությունների թվում բերվում է նաև՝ օր:

Այժմ համառոտ անդրադառնանք բժշկարանների արար. և պրսկ. փոխառությունների հնչյունական կողմի առանձնահատկություններին: Նկատենք, որ արարբերենի և միջին գրական հայերենի հնչույթային, մանավանդ բաղաձայնական համակարգերը մեծապես տարբերվում են: Միշտ չէ, որ արար. հնչույթի դիմաց հայերենը կարող է դնել համարժեք հնչույթ: Դա պարզ երևում է նաև հիշյալ բժշկարանների արար. փոխառությունների տառադարձության պատկերը քննելիս: Զխորանալով առանձին մանրամասների մեջ՝ նըշենք, որ արար. փոխառությունների հնչյունական տառադարձումը երեք բըժըշկարաններում զգալի տարբերություններ չի արձանագրում: Այն կարելի է ցույց տալ տառադարձման հետևյալ համեմատական աղյուսակի ձևով:

արար. հնչյունը	հաճախագեպ տառադարձումը	հավաղեպ տառադարձումը
b	պ	բ, ֆ (Գր.), փ (ԲԶ)
t	թ	տ (ԲԶ)
ṭ	թ	դ, ֆ (ԲԶ)
ṭ	ճ	չ (ԲԶ)
h	հ	յ, խ
ḥ	խ	դ (Գր., ԲԶ)
d	տ	դ, թ (ԳՀ)
ḍ	տ	դ (ԳՀ, Գր.), թ (ԳՀ, ԲԶ) զ (ԲԶ)
r	ռ	ր
z	զ	
s	ս	
š	շ	
ṣ	ս	դ (ԳՀ)
ḏ	տ	դ, թ
ṭ̣	տ	դ, թ
ẓ	տ	դ, զ (ԳՀ)
ṣ̌	յ	հ, զ (ԳՀ)
γ	խ	դ, գ, կ
f	ֆ	փ, վ/ւ՝ Գր./
q	խ	կ, ղ
k	ք	գ, կ
l	լ	
m	մ	
n	ն	
h	հ	
w	ու	ւ, վ (ԳՀ)
ī	ի	

Ինչ վերաբերում է պրսկ. փոխառությունների հնչյունական կողմին, ապա այստեղ վիճակը փոքր-ինչ այլ է. տառադարձվող նշանները և նրանցով արտահայտվող հնչյունները իրենց արժեքով ավելի մոտ են փոխառու լեզվի հնչյունական արժեքներին: Դա ակնհայտ երևում է հետևյալ համեմատական աղյուսակից:

պրակ. հնչյունը	հաճախագրեալ տառադար- ձումը	հաղվագրեալ տառադարձումը
b	պ	բ, ֆ
p'	փ	պ, ֆ
t'	թ	տ
ʃ	ճ	շ
č	չ	
h	խ	
d	տ	դ
r	ռ	ր
z	զ	ժ
s	ս	
š	շ	
t'	թ	
Y	ղ	
f	ֆ	փ
k'	ք	կ
g	կ	դ, ք
l	լ	
m	մ	
n	ն	
v	վ	
h	հ	
č	ի	

Քննվող բժշկարանների փոխառութիւնների բնութագրական կողմերից մեկն էլ բառակազմական առանձնահատկութիւններն են: Նշենք, որ որոշ փոխառյալ անուններից և բայահիմքերից ածանցման միջոցով ստեղծվում են նոր անուններ.

- արան — հաքիմ > հաքիմարան
իշ — պարուտակ > պարտակիշ
ութիւն — դահ > դահութիւն, թուխմա > թուխմայութիւն,
խումար > խումրութիւն, նայիպ > նայիպութիւն
ուկ — խիար > խիարուկ, շառտել > շառտուկ
ոսս — կոլինջ > կոլնջոտ, նզլա > նզլոտ, պլղամ >
պլղամոտ, սաֆրայ > սաֆրայոտ

Որոշ փոխառյալ անուններ էլ հակված են բարդվելու, այսպես.
խումար > խումրցաւ, պախրէ > պախրէցաւ

Վերջապես, փոխառութիւնների ձևաբանական առանձնահատկութիւնների քննութիւնը ցույց է տալիս, որ դրանց խոսքիմասային բաշխումը սահմանափակ է: Մեծագույն մասը գոյականներ են, որոնք հոլովվում են -ի կամ -ու (ոյ) հոլովմամբ, գործիականի -ով վերջավորութիւն կողքին հանդիպում է նաև -օմ՝ լմօմ: Հոգնակերտներից իրացվում են միայն -եր, -ներ, -նի մասնիկները:

Փոխառութիւնների սակավաթիվ մի խումբ հանդես է գալիս ածականական կիրառութիւնով՝ ասլ, դահ, գառտ, քաթա, քաֆէ, թեվզեն, խալս, կամաթ, հանաֆ, հաւաի, հուայ, մայամի, յատասի, սոփ, սուսանի, բլաֆ:

Այլ խոսքի մասերից իբանում են բայերը՝ աղաշնալ, աղդպել, գանըլնալ, գորգզալ, քախքան անել, ժաւտալ, լկամել, խալսիլ, խղալտենալ,

խումբել, ցել, ճոռռալ, մահմիզել, մաղտել, մճնիլ, յայպել, յիմել, շառտել, շալիշել, շախել, պուհուրտել, տահրկել, փաշխտիլ:

Ավելացնենք, որ փոխառյալ միավորների ձևար. բնութագրի անբաժան կողմերից մեկն էլ խոսքիմասային փոխանցումն է, ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական կառույցների ձևով.

Աղաւաշ>աղաշնալ, դահ>դահանալ, ելէճ>ելէճ այնել, զահր>զահրել, զմայթ>զմայթոել, թուխմայ>թուխմայել, լկամ>լկամել, խալաս>խալսիլ, խումար>խումրել/խումրնալ, խումար առնել, կամշ>կամշոել, դալատ>դալտենալ, միլ>միլ ածել/դնել, յիմար>յիմարիլ, պարուտակ>պարտակել:

А. Г. МУШЕГЯН—Об арабских и персидских заимствованиях в армянских лечебниках XIII века.—Из числа многочисленных арабских и персидских заимствований (около 700) в лечебниках XIII века («Лечебник Гагика-Хетума», III часть, Григорис—«Анализ природы человека и его недугов», «Лечебник лошадей и вообще вьючных животных») выделяются общие лексические единицы. Делается семантический анализ заимствований, при этом приводятся редко встречающиеся единицы (աղաւաշ, ապուրմաս, բուհր, զմայթոել, ժաւճտալ, լիմա, խամ (ա), խաս, խթինակալուհմ, խուշրինակ, հէճէպ, մղայնեխ, նատիֆ, շարաիֆ, շախել, պիճակ, սղար, տարապ, տուպիայ, փաղուտակ, փուշա, փուլօլ, օր//ալր) и дается их этимология. На основе изучения транскрипции заимствований по отдельным языкам приводятся сравнительные таблицы, показывающие незначительное различие в дистрибуции транскрибируемых знаков в трех лечебниках. Наконец, рассматриваются словообразовательные и морфологические особенности заимствований в данных средневековых трудах.